ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԲԵՐՔԱԲԵՐԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԻ

ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ Գ. ԲԵՐՔԱԲԵՐ ՀՐԱՊԱՐԱԿ 4 ՊԵՌ098-00-80-13

«17» մայիսի 2013 թ.

ՈՐՈՇՈՒՄ N 06-Ա

01 / 03 -06

<< 17 >> մայիսի 2013 թվական

ԼԵՎՈՆ ԱՐԱՄԻ ԽՈՒԴԱՎԵՐԴՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԻՐԵՆՑ ԿՈՂՄԻՑ ՏԻՐԱՊԵՏՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ, ԱՎՏՈՏՆԱԿԻ և ԱՆԱՍՆԱՇԵՆՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ՏՆԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՏԻՐԱՊԵՏՎՈՂ ( ԾԱԾԿԱԳԻՐ 11-020-0011-0018 ) ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ 2365,5 քմ հողամասը, բնակելի տունը, ՝ավտոտնակը և անասնաշենքը չեն գտնվում ՀՀ << Հողային օրենսգրքի >> 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում ինժեներատրանսպորտային օբեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ և ղեկավարվելով << Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին >> ՀՀ օրենքի 1-ին և 2-րդ կետի պահանջներով և ՀՀ կառավարության 29.12. 05 թ. 2387-Ն

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վերականգնել Լևոն Արամի Խուդավերդյանի սեփականության իրավունքը իրենց կողմից տիրապետվող բնակելի տան, ավտոտնակի և անասնաշենքի նկատմամբ:

2. Լևոն Արամի Խուդավերդյանի տնատիրության կողմից տիրապետվող ( ծածկագիր 11-020-0011-0018 ) գույքին տալ հասցե գ. Բերքաբեր 5 փողոց 4 փակուղի 6 :

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրմանը հաջորդող օրվանից:

ԳՅՈՒՂԱՊԵՏ Ա.ՄԱԴԱԹՅԱՆ

17. 05. 2013 թ.
Գ. Բերքաբեր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԲԵՐՔԱԲԵՐԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԻ

ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ Գ. ԲԵՐՔԱԲԵՐ ՀՐԱՊԱՐԱԿ 4 ՀԵՌ098-00-80-13

«17 » մայիսի 2013 թ.

ՈՐՈՇՈՒՄ N07-Ա

01 / 03 -07

<< 17 >> մայիսի 2013 թվական

ԱՌԱՋԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՐՔԱԲԵՐ ԳՅՈՒՂԻ 5 ՓՈՂՈՑ 4 ՓԱԿՈՒՂԻ 6 ՀԱՍՑԵԻ 2200,0 ՔՄ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԿԻՑ ՓԱՍՏԱՑԻ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ 436,5 ՔՄ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԼԵՈՆ ԱՐԱՄԻ ԽՈՒԴԱՎԵՐԴՅԱՆԻՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ;

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ նշված հողամասը չի գտնվում ՀՀ << Հողային օրենսգրքի >> 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում ինժեներատրանսպորտային օտարման օբեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ

Ղեկավարվելով ՀՀ << Հողային օրենսգրքի >> 64-րդ հոդվածի 2-րդ կետի, ինչպես նաև ՀՀ կառավարության 1998 թ. դեկտեմբերի 31-ի թիվ 867 որոշման պահանջով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Առաջին պետական գրանցման աշխատանքների իրականացման շրջանակներում Բերքաբեր գյուղի 5 փողոց 4 փակուղի 6 հասցեի 2200,0 քմ տնամերձ հողամասին կից փաստացի օգտագործվող 436,5 քմ հողամասի նկատմամբ ճանաչել Լեոն Արամի Խուդավերդյանի սեփականության իրավունքը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրմանը հաջորդող օրվանից:

ԳՅՈՒՂԱՊԵՏ՝ Ա.ՍԱԴԱԹՅԱՆ

17.05.2013 թ.
Գ. Բերքաբեր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԲԵՐՔԱԲԵՐԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԻ

ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ Գ. ԲԵՐՔԱԲԵՐ ՀՐԱՊԱՐԱԿ 4

ՀԵՌ098-00-80-13

«17 » մայիսի 2013 թ.

01 / 03 -08

ՈՐՈՇՈՒՄ N 08-Ա

<< 17 >> մայիսի 2013 թվական

ԲԵՐՔԱԲԵՐԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԻ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹԻ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Համայնքային Ծառայության մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 12-րդ մասով և 19-րդ հոդվածի 1-ին մասով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. ՀՀ Տավուշի մարզի Բերքաբերի գյուղապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության թափուր պաշտոնի համար մրցույթի օր սահմանել ս/թ հուլիսի 3-ը ( ըստ հավելվածի ):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրմանը հաջորդող օրվանից:

ԳՅՈՒՂԱՊԵՏ՝ Ա.ՄԱԴԱԹՅԱՆ

17. 05. 2013 թ.
Գ. Բերքաբեր

Հավելված

# ԲԵՐՔԱԲԵՐԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂԻ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ և ՄՐՑՈՒՅԹԻ ԵՆԹԱԿԱ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԻ

## Ց Ա Ն Կ

Ատեստավորման ենթակա համայնքային ծառայող

1. Դիլբարյան Գրիշա Արտավազդի - առաջին կարգի մասնագետ ( ծածկագիրը 3.2-1)

Մրցույթի ենթակա թափուր պաշտոն

1. Աշխատակազմի քարտուղար ( ծածկագիրը 1.2-1 )

ԳՅՈՒՂԱՊԵՏ Ա. ՄԱԴԱԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐՔԱԲԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 հունիս 2013 թվականի N 09-Ա

## ԲԵՐՔԱԲԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 11-020-0004-0006 ԾԱԾԿԱԳՐՈՎ 0.02 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ,ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 187.0 ՔՄ ԱՐՏԱՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԵԿԵՂԵՑՈՒ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐՈՒՄ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Բերքաբեր համայնքի վարչական տարածքում գտնվող 11-020-0004-0006 ծածկագրով 0.02 հա մակերեսով հողամասում, որը հանդիսանում է պետական սեփականություն, համաձայն ՀՀ կառավարության 2005թ. սեպտեմբերի 28-ի թիվ 1906-Ն որոշման, ընդգրկված է „Հատուկ պահպանվող տարածքների հողերի կազմում,, ինքնակամ կառուցվել է 187.0 քմ արտաքին մակերեսով եկեղեցի:

Եկեղեցու կառուցումը չի հակասում հատուկ պահպանվող տարածքների հողերի գործառնական նշանակությանը և սահմանված իրավական ռեժիմին: Եկեղեցու զբաղեցված 0.02 հա մակերեսով հողամասը չի խոչընդոտում այլ հողատարածքների նպատակային կամ գործառնական նշանակությանը, դասվում է ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի շարքը, չի գտնվում ինժեներատրանսպորտային օբեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի սահմանափակում այլ անձանց իրավունքները, չի առաջացնում սերվիտուտ:

Հաշվի առնելով վերոհիշյալը, քաղաքաշինության խորհրդի դրական եզրակացությունը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ կետերի և ՀՀ կառավարության 18.05.2006թ. թիվ 713-Ն և 912-Ն և 29.12.2005թ. 2387-Ն որոշման պահանջներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Ճանաչել Հայաստանի Հանրապետության սեփականության իրավունքը Բերքաբեր համայնքի վարչական տարածքում գտնվող 11-020-0004-0006 ծածկագրով 0.02 հա մակերեսով հողամասի վրա, ինքնակամ կառուցված 187.0 քմ արտաքին մակերեսով եկեղեցու նկատմամբ:

2. Համարել օրինական Բերքաբեր համայնքի վարչական տարածքում 11-020-0004-0006 ծածկագրի տակ գտնվող պետական սեփականություն հանդիսացող 0.02 հա հողամասի վրա ինքնակամ կառուցված 187.0 քմ արտաքին մակերեսով եկեղեցին:

3. Բերքաբեր համայնքի վարչական տարածքում գտնվող 11-020-0004-0006 ծածկագրով 0.02 հա մակերեսով հողամասում կառուցված 187.0 քմ արտաքին մակերեսով եկեղեցուն տալ հետևյալ հասցեավորումը՝ Տավուշի մարզ, գյուղ Բերքաբեր, 5 փողոց թիվ 4/1 :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՄԱԴԱԹՅԱՆ